

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՆԱԳՐՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի Քրեական օրենսգրքի 212-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ՝ 4.1 և 4.2 մասերով.

«4.1. Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, պիտանիության ժամկետի նշումն աղավաղված, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով, հայերեն լեզվով մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ իրացնելը, եթե այդ արարքը մարդու առողջության համար անգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս,

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկի չափով:

4.2. Նույն արարքը, որն անգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ կառավարության դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

ՀՀ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ կառավարություն</p> <p>Աժ պատգամավոր Արա Նռանյան</p> <p>Աժ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան</p>	<p>1. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 212-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում սպառողներին խաբելու համար: Նախագծով առաջարկվող լրացումն ըստ էության, վերաբերում է նշված օրենսգրքի 212-րդ հոդվածին, այդ պատճառով առաջարկվում է ոչ թե Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը լրացնել նոր՝ 207.1-ին հոդվածով, այլ նշված լրացումը կատարել օրենսգրքի 212-րդ հոդվածում:</p> <p>2. Ազատագրկման պատիժը մինչև հիգ տարի շատ մեծ տարբերություն է: Սահմանել նվազագույն պատժի ժամկետ:</p> <p>3. Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2012 թվականի հունվարի 1-ից:</p>	<p>1. Նույն խմբագրությամբ լրացումն առաջարկվում է կատարել 212-րդ հոդվածում:</p> <p>2. Ընդունվել է:</p> <p>3. Ընդունվել է:</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածի «օրենսգրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ՝ 207.1 հոդվածով. Հոդված 207.1. Պիտանիության ժամկետն անցած ապրանքներ իրացնելը.» բառերը փոխարինվել են «օրենսգրքի 212-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4.1 և 4.2 մասերով» բառերով:</p> <p>2. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի &lt;առավելագույնը հինգ տարի&gt; բառերը փոխարինվել են &lt;երեքից հինգ տարի&gt; բառերով:</p> <p>3. Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը փոխարինվել է 2012 թվականի հունվարի 1-ով:</p>